



# ՆՈՐ ՏԱՐԻՆ ՀԱՅՈՅ ՄԷՋ՝ ԱՆՑԵԱԼԻՆ



Նախապես հայոց մեջ բազմաթիւ գուշակութիւններ Նոր Տարուան անբաժան, բնորոշ մասը կը կազմէին: Օրինակ, Ջաւախքի մէջ, Նոր Տարուան օրը տան հայրը տնեցիներուն ուղեկցութեամբ գոմ կը մտնէր: Ան ձին կը քաշէր գոմին մէջտեղը, եւ տնեցիները բոլորն ալ անհամբերութեամբ կը սպասէին տեսնելու համար թէ առաջին անգամ ձին իր ո՞ր ոտքը պիտի բարձրացնէր: Եթէ աջը բարձրացնէր, կը նշանակէր թէ բարեբախտ տարի մը պիտի ըլլար, իսկ եթէ ձախը բարձրացնէր ձախորդ տարի մը պիտի ըլլար:

Այլ վայրերու մէջ, Նոր Տարուան գիշերը, տնեցիները կը նստէին մոմի լոյսին ներքեւ եւ կը դիտէին մոմի լոյսէն պատերուն վրայ ցոլացած իրենց ստուերները եւ այդ ստուերներու լուսաւորութեան եւ տօգունութեան համաձայն կը գուշակէին անոնց տիրոջ լուսաւոր կամ մութ, անորոշ ապագան՝ այդ տարուան համար: Իսկ աղջիկները հաւկիթ մը կ'առնէին, կը լուային, անոր քով ածուխ եւ հինա կը դնէին: Առաւօտուն, եթէ տեսնէին որ հաւկիթը կարմրած էր, այն ենթադրութիւնը կ'ունենային որ այդ հաւկիթը գետեղող աղջիկը այդ տարի կարմիր բախտի պիտի արժանանար: Եթէ հաւկիթը փոխանակ կարմրելու, սեւ գոյն ստանար, կը նշանակէր թէ այդ աղջիկը դժբախտ տարի մը պիտի անցընէր:

Բացի գուշակութիւններէն ուրիշ միջոցներու ալ կը դիմէին յաջողութիւններ ապահովելու համար: Այդ օր կը խուսափէին որեւէ մէկուն փոխ տալ, յատկապէս թթխմոր կամ դրամ: Ծախս չէին ընէր: Առաւօտեան, տան դուռը առաջին անգամ տան մէծը կը բանար, որպէսզի ան երկար տարիներ իր տունէն անպակաս ըլլար: Առաւօտ կանուխ, Նոր բերուած շուրջ կը սրսկէին տան անկիւններուն, առատութիւն ապահովելու նպատակով: Նուերներ կը փոխանակէին իրարու: Մասնաւորաբար մեծերը, անպայման նուերներ կու տային փոքրիկներուն: Առաւօտ կանուխ, տան մէծը լայն ափսէին մէջ կը շարէր հաց, գինի, մեղր եւ չորս խնձոր, որոնց վրայ մոմ կը վառէր: Ափսէն տանելով տան չորս անկիւնները, ան կ'ըսէր. «Անուշ ըլլայ, անոնց որոնք ներկայ չեն, Շնորհաւոր Նոր Տարի»: Յետոյ դուրս կ'ելլէր եւ կ'աղօթէր Աստուծոյ, խնդրելով որ ամբողջ տարին իր տան համար ըլլար այնքան քաղցր, որքան էր ափսէին պարունակութիւնը: Այնուհետեւ ան տուն կը մտնէր եւ տան բոլոր անդամները կը հրաւիրէր ճաշակելու հացէն եւ մեղրէն, ըսելով. «Այսպիսի քաղցրութեամբ ծերանաս»: Վերջապէս, մեղրէն խաչածէս կը քսէր դրան ճակտին եւ վառած մեղրամոմի ծուխով կը սեւցնէր քսած տեղը, կարմիր լաթ մը կը կապէր մէջքին եւ ներս մտնելով մանուկներուն կը բաժնէր անոնց համար թխուած խմորեղէնները: Տան դուռը երբեք չէր փակուեր: Առաւօտ կանուխ կը սկսէին այցելութիւնները: Անոնք կ'այցելէին տոհմի մեծերուն, խնամիներուն, դրացիներուն, կնքահօր, գիւղապետին ու քահանային:

Կարգ մը շրջաններու մէջ տան անդամներէն մէկը տանիք կը բարձրանար եւ հոն փայտով, կացինով կամ որեւէ սուր առարկայով աղմուկ կը բարձրացնէր: Վարէն մէկը կը հարցնէր.

- Ի՞նչ կ'ընես:
- Մուկ եմ բռնած, կը պատասխանէր այն անձը, որ տանիք բարձրացած էր:
- Ո՞ր պիտի ուղարկես:
- Անգլիա (պատասխանը պետք է ըլլար կարելի եղածին չափ հեռու երկրի մը անունը):



Որոշ դադարէ մը ետք աղմուկը կը վերսկսէր. հարցումը կը կրկնուեր.

- Ի՞նչ կ'ընես:
- Ցաւ կը կտրեմ:
- Ո՞ր պիտի ուղարկես:
- Իսթանպուլ (որքան անհասանելի ըլլար երկիրը, այնքան լաւ կ'ըլլար: Այդ ցաւը կրնար «ուղարկուիլ» նաեւ թշնամի երկիր մը):


Այս երկխօսութիւնը կրնար շարունակուիլ այնքան ատեն, մինչեւ որ տան բոլոր առկայ եւ հաւանական դժբախտութիւնները, չարիքները ուղարկուին, հեռացուին տունէն:

Այսպէս կ'անցընէին ահա մեր նախնիք Նոր Տարուան տօնը, որ ներկայիս բոլորովին կորսնցուցած է իր աւանդական դիմագիծը, թէ՛ աշխարհագրական տարածքի փոփոխութիւններու, թէ՛ ապրուստի աղբիւրներու, թէ՛ նահապետական ընտանեկան ըմբռումներու եւ թէ՛ այլ ընկալումներու տեսակետէն:

ԹԻՒՔ ՊԱՏՐԱՍՏԵՑ՝ ՄԱՐՄԻՆԻ ԱՇՈՏԵԱՆ-ՇԱՀԻՆԵՆԻ  
ՆԿԱՐԱՍՏՈՂԵՑ՝ ՈՒՅՅՈՒ ՔԵՇԻՇԵԱՆ



Կրնա՞ս ամբողջացնել Կաղանդ Պապուկին պատկերը:



Կրնա՞ս գտնել ութը տարբերություններ երկու պատկերներուն միջև:




Թուաբանական պատասխաններուն համեմատ գունաւորե՛ այս գեղեցիկ տօնածառը հետեւեալ ձեւով.

- Թիւ 10 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ դեղին:
- Թիւ 15 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ կարմիր:
- Թիւ 20 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ մանիշակագոյն:
- Թիւ 25 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ գոց կանաչ:
- Թիւ 30 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ բաց կապոյտ:
- Թիւ 35 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ գոց կապոյտ:
- Թիւ 40 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ Վարդագոյն:
- Թիւ 45 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ նարնջագոյն:
- Թիւ 50 բազմապատկութեան արդիւնք կրող բաժինը՝ բաց կանաչ:

## ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ

Ճերմակ, փափուկ մուշտակ հագած,  
 Կաղանդ Պապան սահնակ նստած,  
 Նուէրներու տոպրակն ուսին՝  
 Մօտեցաւ ան տօնածառին:  
 Շնորհաւոր՝ ձեր Նոր Տարին,-  
 Ըսաւ Պապը փոքրիկներուն:  
 - Տարի մըն է ձեզ չեմ տեսած,  
 Բայց ձեր մասին շատ եմ լսած:  
 Կ'ուզեմ ձեզմէ ամեն մէկը  
 Պատմէ ինծի իր ըրածը:  
 Ով որ մեծերը շատ կը յարգէ,  
 Ով որ թռչուն կը կերակրէ,  
 Ով որ ծաղիկներ կը խնամէ,  
 Ով որ գարնան ծառ կը տնկէ,  
 Ես այդ բարի փոքրիկները  
 Շատ կը սիրեմ,- ըսաւ Պապը:



# ՓՈՔՐԻԿ ՅՈՒՐԻ-ԲԵՐԻՆ



Հինգշաբթի իրիկուն Յուրի-Բերին Վաչիկը հարսանիքի մը հրաւիրեց: Հարս ու փեսան երկու գեղեցիկ առնետներ էին, որոնք կ'ապրէին շտեմարանին տակ: Երբ Յուրի-Բերին ու Վաչիկը հարսնետուն հասան, Վաչիկ ըսաւ. *«Ես մեծ եմ եւ չեմ կրնար մտնել առնետներուն ծակուռը»*: Փոքրիկ Յուրի-Բերին պատասխանեց. *«Մի՛ վախնար, ես քեզ հիմա այնքան կը պզտիկցնեմ, որ կարենաս մտնել»*: Այս ըսելէն ետք, իր կախարդական գաւազանով զարկաւ Վաչիկին գլխուն եւ ան պզտիկցաւ, տարօրինակ չափով պզտիկցաւ: Այն ատեն Յուրի-Բերին ըսաւ. *«Հիմա քեզի զինուորական տարագ մը պիտի հագցնեմ, որպէսզի աչքառու եւ իւրայատուկ ըլլաս»*: Վաչիկ ակնթարթի մը մէջ ինքզինք գտաւ զինուորական տարագով: Ձախ կողմէն իր սուրը կախուած էր: Ապա, Յուրի-Բերին հարս ու փեսին ծակը մտաւ եւ հետեւեցաւ իրեն:

Իրենք զիրենք գտան աղտոտ սենեակի մը մէջ, որ միս ու պանիր կը բուրեր: Հարս ու փեսան հագուած էին իրենց ամենէն գեղեցիկ հագուստները: Երկու հիւրերը ուրախութեամբ ընդունուեցան: Վաչիկ հարսին գեղեցիկ փունջ մը ծաղիկ նուիրեց ու ամօթէն կարմրեցաւ: Յուրի-Բերին հարս ու փեսին առջեւ խոնարհեցաւ ու ըսաւ. *«Ձեզի երջանիկ կեանք կը մաղթեմ, թող ձեզի պէս գեղեցիկ ու ազնիւ զաւակներ ունենաք»*:

Ուրբաթ գիշեր Յուրի-Բերին Վաչիկը տարաւ ուրիշ հարսանիքի մը: Այս անգամ հարս ու փեսան առնետներ չէին, այլ՝ երկու պուպրիկներ: Երբ հարսնետուն մտան, Յուրի-Բերին բացազանչեց.

- Հաւաքոյթին համար ամեն ինչ պատրաստ է:

Իրականութեան մէջ, զինուորներ շարուած էին սեղանին վրայ՝ ի պատիւ հարս ու փեսային: Հարս ու փեսան նստած էին սենեակին անկիւնը եւ ուշադրութիւն չէին դարձներ ո՛չ զինուորներուն եւ ո՛չ ալ նուէրներուն, որոնք իրենց բարեկամները բերած էին:

Հարս ու փեսան իրենց տունը շտկելով ու կահաւորելով զբաղած էին: Փեսան հարսին ըսաւ.

- Հիմա պէտք է որոշենք թէ ո՛ր պիտի անցնենք մեղրալուսինը եւ ուր՝ ամառը:

Հարսը ըսաւ. *«Ես կը նախընտրեմ ծով երթալ»*: Փեսան ըսաւ. *«Ես կը նախընտրեմ գիւղը»*:

Հարսն ու փեսան, երկար ըսի-ըսաներէ ետք որոշեցին տունը մնալ, որովհետեւ չկրցան որոշել ամառը:

Շաբաթ գիշերուան համար Յուրի-Բերին մտադրած էր մեծ անակնկալ մը ընել Վաչիկին: Սակայն պատահեցաւ բան մը, որ չէր սպասուեր:

Վաչիկին հօրեղբայրը, որուն նկարը կախուած էր սենեակի պատէն, շրջանակէն ելաւ եւ պզտիկ Յուրի-Բերին վրայ բարկանալով ըսելով.

- Դուն պզտիկ խելքով Յուրի-Բերի մըն ես: Փոխանակ փոքրիկներուն օգտակար բաներ սորվեցնելու, դուն անոնց երեւակայական ու անօգուտ երազներ կը բերես, որոնք իրականութիւն չեն:

Յուրի-Բերին շատ վախցաւ Վաչիկին հօրեղբոր խիստ ձայնէն եւ հանդարտելէն ետք ըսաւ անոր.

- Դուն իրաւունք ունիս պրն. հօրեղբայր. ասկէ ետք պզտիկներուն պիտի պատմեմ միայն այն պատմութիւնները, որոնք անոնց դասերուն օգտակար պիտի ըլլան...:

(Վերջ)



### ԻՆՉՈ՞Ւ ԶԻՒՆ ԾԵՐՄԱԿ Է

Զինը կազմուած է սառոյցի մանր բիրեղներէն: Այս բիրեղները հայելիի նման կը բանին եւ կը ցոլացնեն արեւուն արծակած ճերմակ լոյսը: Այս պատճառով ալ ձիւնը մեզի ճերմակ կը թուի:

### ԻՆՉՈ՞Ւ ՀԱՅՐ ԿԸ ԿԱՐԾՐԱՆԱՅ

Դուն գիտե՞ս, թէ հացը ջուր կը պարունակէ: Երբ այդ ջուրը օդին ներկայութեան շոգիանայ՝ հացը կը չորնայ, լուացարանին ծայրը լքուած սպունգին նման:

### ԻՆՉՈ՞Ւ ՕԴՐ ԵՎ ՑԱՏ ՑՈՒՐՏ Կ'ԸԼԼԱՅ ՀԻՄՆԻՍԱՅԻՆ ԵՒ ՀԱՐԱԲԱՅԻՆ ԲԵՒԵՌՆԵՐՈՒՆ ՄԷՁ

Որովհետեւ երկրագունդը կլոր է, իսկ Հիւսիսային եւ Հարաւային բեւեռները արեւէն շատ անելի հեռու են, քան՝ հասարակածը: Անոնք արեւէն նուազ ճառագայթ կը ստանան, հետեւաբար՝ նուազ տաքութիւն: Հարաւային բեւեռին մէջ ջերմաստիճանը մօտաւորապէս 50 է, այսինքն երեք անգամ անելի ցուրտ, քան մեր տան սառնարաններուն սառոյցի բաժինը: